ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"_23_" _մայիսի_ 2012թ № 60-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի <<Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 202-Ն որոշմամբ ընդունված կարգի, **որոշում եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2011 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների չափը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ մինչև 2012 թվականի հոկտեմբերի 1-ը, սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել շահութաբաժնի առկա պարտավորությունը:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. մայիսի 23
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ.մայիսի 23 -ի N 60- Ա որոշման

ՑԱՆԿ

2011թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջե շահութաբաժին վճարող առողջապահական փակ բաժնետիրական ընկերությունների

N	ՀՀ Սյունիքի մարզային ենթակայության առողջապահական փակ բաժնետիրական ընկերության անվանումը	ՀՀ 2012թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարի չափը (հազ. դրամ)
1	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	39.1
2	«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	280.0
3	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	573.0
4	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ	48.0
5	«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	20.5
6	«Տաթևի առողջության կենտրոն» ՓԲԸ	9.0
7	«Վերիշենի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ	71.0
8	«Դարբասի առողջության կենտրոն» ՓԲԸ	11.5
9	«Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ	12.0
10	«Նորաշենիկի ԱԱՊԿ» ՓԲԸ	4.6
11	«Բռնակոթի ԱԱՊԿ» ՓԲԸ	20.0
12	«Գորայքի ԱԱՊԿ» ՓԲԸ	4.0
13	«Տեղի ԱԱՊԿ» ՓԲԸ	84.0
14	«Շինուհայրի ԱԱՊԿ» ՓԲԸ	11.0
15	«Խնձորեսկի ԱԱՊԿ» ՓԲԸ	94.4

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Ղազարյան